

նէլից եօթնազլիսեան վիշապն եւ Վէնէտիք որ
է բանալի եւ մուտ Ֆուանկաց երկրին. եւ թէ
ապստամբեցաւ եւ տուքն. ի խոր խոցեցան.
80 եւ փութով հրեշտակ առաքեցին առ Փափն,
մեղադրելով նմա թէ այտ ինչ բան եղեւ, որ
մեծ ազմուկ եւ խոտվութիւն եկն աշխարհս
մեր. կամիք զմեզ մատնել ի ձեռս թշնա-
մեաց. եւ թէ ոչ հաշտիս բնդ Վէնէտիք, կո-
85 բեաւ թաղաւորութիւնն մեր եւ եղեւ բաժին
անօրինաց:

Իսկ Փափն լուեալ զայս լուրս բօթալի,
անկաւ ի մեծ սուգ, որպէս հովիւ հողեւոր.
զղջացաւ իբրեւ փոչման եղեալ արածին եւ
90 պատերազմին. եւ գրեաց առ նոսա թէ Որ-
պէս կամիք այնպէս արարէք, միայն թափե-
ցէք զերկիրս ի ձեռաց այլազգեաց: Ապա
Ալամանաց մեծ իշխանն որ սահմանակից էր
եւ սիրելի Վէնէտիքու տուքին, այլ իշխանօք,
95 որ բազում ազերսանօք եւ աղաչանօք հազիւ
կարացին համոզել եւ դարձուցանել ի հաշ-
տութիւն. եւ առեալ տարան առ Փափն որ
խոնարհեալ ետադ գաջն. եւ նա օրհնեաց
զնա եւ զքաղաքն. եւ քահանայից հրաման
100 ետ գնալ: Եւ եղեւ ուրախութիւն մեծ եւ խա-
ղաղութիւն աշխարհն Ֆուանկաց: Իսկ զօրքն
Տաճկաց որ արագընթաց վաղէին իբր ի հար-
սանիս, իբրեւ լուան զհաշտութիւն՝ ամօթա-
լից յետս դարձան: Փառք Աստուծոյ: